Ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի ոլորտ

Երեխաների հիմնահարցեր

Հայաստանի Հանրապետությունում երեխաների սոցիալական պաշտպանության ոլորտի հիմնական նպատակը երեխաների սոցիալական պաշտպանությունն ու հասարակության մեջ նրանց ինտեգրումն է, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների կյանքի որակի բարելավումն է:

Վերջին տարիներին երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության իրականացման և համակարգման առումով կարևորագույն ձեռքբերում է ինստիտուցիոնալ նոր կառույցի՝ երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի ստեղծումը՝ ազգային, մարզային և համայնքային մակարդակներում:

2005 թվականից գործում է երեխաների պաշտպանության ազգային հանձնաժողովը, որի գործունեությունը հիմնականում ուղղված է երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության երաշխիքների ապահովման միասնական պետական քաղաքականության իրականացմանը, ինչպես նաև երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունն իրականացնող պետական կառավարման մարմինների, հասարակական, քաղաքական, գիտական և այլ կազմակերպությունների համագործակցության համակարգմանը:

2006 թվականից գործում են մարզպետարանների (Երևանի քաղաքապետարանի) ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները, որոնց խնդիրն է մարզում՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված երեխաների պաշտպանությանն ուղղված քաղաքականության իրականացումը, կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխայի իրավունքների պաշտպանության ապահովումը և նպատակային ծրագրերի մշակումն ու իրագործումը:

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով ամրագրված՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները հանդիսանում են երեխաների իրավունքների պաշտպանության առաջին մակարդակը, որոնք համագործակցելով մարզպետարանների համապատասխան բաժինների հետ, իրականացնում են երեխաների իրավունքների պաշտպանությունը համայնքներում:

Հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման և հաստատություններում խնամվող երեխաների իրավունքների պաշտպանության, նրանց կյանքի որակի բարելավման նպատակով ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են հաստատություններ երեխաների ընդունելության կարգերը և սահմանվել հաստատությունների տիպերի ցանկը և դրանցում տեղավորման չափանիշները: Այնուհետև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում երեխաների խնամքը կրթությունից տարանջատելու նպատակով 17 հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունից 7-ը վերակազմակերպվել են երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունների, իսկ 10-ը՝ հանրակրթական ուսումնական հաստատության: Իրականացված միջոցառումների արդյունքում հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող 4500 երեխայից շուրջ 4000-ը վերադարձել է կենսաբանական ընտանիք, իսկ 600-ը տեղավորվել է երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ, որտեղ նրանց ուսումը տարանջատվել է խնամքից:

Ներկայում հանրապետությունում գործում է երեխաների խնամքի և պաշտպանության 8 գիշերօթիկ հաստատություն, որտեղ խնամվում են սոցիալապես անապահով, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների դպրոցահասակ երեխաները և որոնց հաստատությունում գտնվելու ժամանակահատվածը սահմանափակված է՝ տարեկան շուրջ 250 օր:

Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականության հիմնական գաղափարախոսությունը երեխայի խնամքն ու դաստիարակությունն ընտանիքում ապահովելն է՝ հաստատությունից երեխային կենսաբանական ընտանիք վերադարձնելու, խնամակալության հանձնելու, որդեգրման հանձնելու, խնամատար ընտանիքում խնամքը կազմակերպելու և այլընտրանքային ծառայությունների միջոցով:,

Երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու նպատակով 2006 թվականից իրականացվում են հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) և 2008 թվականից «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման» ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի գործունեության միջոցառումների գերակա խնդիր է համարվել մանկատների բեռնաթափումը:

Ներկայում պետական 6 մանկատանը խնամվում է շուրջ 730 երեխա, այդ թվում՝ 506-ը ծանր սահմանափակ կարողություններ ունեցող՝ կենտրոնական նյարդային համակարգի օրգանական ու ֆունկցիոնալ ախտահարումներով, բնածին և ձեռքբերովի ֆիզիկական և մտավոր արատներ ունեցող երեխաներ են: Թեև ընդհանուր տիպի մանկատներում շարունակվում է նվազել խնամվող երեխաների թիվը, այնուհանդերձ ավելացել է առողջական խնդիրներ ունեցող երեխաների թիվը մասնագիտացված մանկատներում:

Բարեփոխումների արդյունքում պետական մանկատների թիվը կրճատվել է 2-ով՝ Գյումրու «Ֆրիտյոֆ Նանսենի անվան մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպվել է «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N 2 գիշերօթիկ հաստատության», իսկ «Երևանի «Զատիկ» մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը 2013 թվականի հունվարի 1-ից վերակազմակերպվել է երեխաների աջակցության կենտրոնի:

2013թ. Մարի Իզմիրլյանի անվան ընդհանուր տիպի մանկատունը փոխել է իր տիպը՝ դառնալով մասնագիտացված մանկատուն: Ներկայում համակարգում գործում է 3 մասնագիտացված մանկատուն:

Ներկայում խնդիր է Խարբերդի մասնագիտացված մանկատան չափահաս շուրջ 160 սանի հաստատությունից դուրսբերումը: Մանկատան հոգեկան խնդիրով չափահաս սաները 18 տարին լրանալուց հետո տեղավորվել են համակարգի Վարդենիսի նյարդահոգեբուժական տուն-ինտերնատում, իսկ մտավոր խնդիրներով չափահաս սաները այլընտրանքի բացակայության պատճառով մնացել են հաստատությունում: Խնդիրը քննարկվել է երեխաների պաշտպանության Ազգային հանձնաժողովի նիստում, ներկայացվել է ՀՀ Կառավարություն: Խնդիրը պահանջում է համալիր լուծում՝ հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար այլընտրանքային ծառայությունների ապահովում (ցերեկային, կենտրոնների ստեղծում, վերականգնողական կենտրոնների ցանցի ընդլայնում) և հաստատություններում գտնվող երեխաների վերադարձը ընտանիքներ, ինչպես նաև չափահաս սաներին կացարանով ապահովում:

2011 թվականին Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև ստորագրվել է «Հայաստան-պարենային ապահովության ծրագիր 2010» ծրագրի ֆինանսավորման Համաձայնագիր (2 մլն եվրո բյուջետային դրամաշնորհ), ըստ որի նախապայմանների՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն իրականացրել է մի շարք աշխատանքներ, մասնավորապես, մշակվել է երեխայի իրավունքների պաշտպանության 2013-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը

Հանրապետությունում գործում է երեխաների ցերեկային խնամքի 2 կենտրոն՝ Երևանում և Գյումրիում: «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության հետ համաֆինանսավորմամբ գործում է չորս ցերեկային կենտրոն՝ Տավուշի մարզի Դիլիջան, Իջևան, Նոյեմբերյան և Բերդ քաղաքներում: Այլ հասարակական կազմակերպությունների կողմից ևս ստեղծվել է երեխաների 16 ցերեկային կենտրոն, որոնք գործում են հանրապետության տարբեր մարզերում:

Երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու և խնամատար ընտանիք տեղավորելու նպատակով 2006 թվականից իրականացվում են հաստատություններից երեխաներին ընտանիքներ վերադարձնելու (բեռնաթափում և կանխարգելում) և 2008 թվականից «Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման» ծրագրերը:

Կարևորագույն խնդիր է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորող երեխաների սոցիալական պաշտպանության բարելավումը և հաստատությունների միասնական կառավարումը, հաստատությունների վերակազմակերպումը այլընտրանքային ծառայությունների:

2012 թվականին ՀՀ կրթության և գիտության և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների համատեղ հրամանով իրականացված ուսումնասիրության արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք չունեցող շուրջ 200 երեխա դուրս է բերվել հատուկ հանրակրթական հաստատություններից և ուղղորդվել հանրակրթական դպրոցներ:

Հաստատությունների բեռնաթափման գործընթացը շարունակելու նպատակով նախատեսվում է հաստատությունների բեռնաթափման և հաստատություններ երեխայի մուտքի կանխարգելման ծրագիր իրականացնել ՀՀ Շիրակի մարզում:

Երեխաների խնամքի ու պաշտպանության գիշերօթիկ հաստատություններում շուրջօրյա խնամք ստացող երեխաների թվի նվազեցման նպատակով նախատեսվում է «Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հատատություն» տիպը փոխարինել «Երեխաների խնամքի կենտրոն» նոր տիպի հաստատությամբ, որը ենթադրում է սոցիալապես անապահով ընտանիքի երեխաների ինչպես շուրջօրյա, այնպես էլ ցերեկային խնամքի և դաստիարակության ապահովում:

Որպես այլընտրանքային խնամքի ծառայություններ 2014-2016թթ. նախատեսվում է ցերեկային կենտրոնների ստեղծում՝ ըստ մարզերի և Երևան քաղաքի գնահատված կարիքների:

Ոլորտի վիճակագրությունը

Վերջին երեք տարիների ընթացքում հաստատություններից երեխաների բեռնաթափման գործընթացի իրականացմամբ պայմանավորված՝ մանկատներից կենսաբանական ընտանիք է վերադարձել 2010 թվականին՝ 40 երեխա, 2011 թվականին՝ 44 երեխա, 2012 թվականին՝ 35 երեխա:

Կրճատվել են մանկատներում խնամվող երեխաների թվերը՝ 2011 թվականի համար հաստատված 860 երեխայի փոխարեն բոլոր մանկատներում փաստացի խնամվել է 794 երեխա՝ հաստատված թվի 92.3%-ը, 2012 թվականի համար հաստատված 790 երեխայի փոխարեն՝ բոլոր մանկատներում ընդհանուր առմամբ խնամվել է 747 երեխա՝ հաստատված թվի 94,6%-ը: 2011 թվականի ընթացքում խնամվել է 794 երեխա, այդ թվում 414-ը՝ 2 մասնագիտացված մանկատներում:

Խնամատար ընտանիքներում 2010 թվականին խնամվել է 24 երեխա, 2011 թվականին՝ 24 երեխա, 2012 թվականին՝ 23 երեխա:

Նախարարությունն իրականացնում է ՀՀ որդեգրման ենթակա երեխաների, ՀՀ և օտարերկրյա քաղաքացի որդեգրել ցանկացող անձանց կենտրոնացված հաշվառումը:

2007-2012 թվականների ընթացքում որդեգրվել է 753 երեխա այդ թվում ՀՀ քաղաքացիների կողմից 348 երեխա, օտարերկրյա քաղաքացիների կողմից՝404 երեխա: Հաշվառվել է որդեգրման ենթակա 798 երեխա, 1466 որդեգրել ցանկացող անձ՝ շուրջ 820 ընտանիք:

2010-2012 թթ. որդեգրվել է 342 երեխա, այդ թվում ՀՀ քաղաքացիների կողմից՝ 177 երեխա, օտարերկրյա քաղաքացիների կողմից՝ 165 երեխա: Հաշվառվել է որդեգրման ենթակա 455 երեխա, 1074 որդեգրել ցանկացող անձ:

ԿԱՆԱՆՑ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Վարչության խնդիրներից է հանրապետությունում գենդերային քաղաքականության մշակումը և դրա իրականացման համակարգումը:

Ոլորտի հիմնախնդիրների կարգավորման հիմնական փաստաթուղթը 2010թ. ՀՀ կառարավության կողմից հաստատված Գենդերային քաղաքականության հայեցակարգն է և 2011թ.-ին ընդունված Գենդերային քաղաքականության և Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թվականների ռազմավարական ծրագրերը: Ոլորտի խնդիրների կարգավորման համար կարևոր նշանակություն ունեն նաև ՀՀ-ի կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերը: Վերոհիշյալ ծրագրերով սահմանվել են առաջիկա տարիներին կանանց և տղամարդկանց նկատմամբ պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններն ու ընդհանուր ռազմավարությունը, որոնք ուղղված են անկախ սեռից հասարակական կյանքի բոլոր ոլորտներում բոլոր քաղաքացիների համար հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովմանը:

Ոլորտի աշխատանքներն ուղղված են եղել օրենսդրության բարեփոխմանը, ինստիտուցիոնալ կառույցների ստեղծմանը և դրանց կարողությունների հզորացմանը, տարբեր կառույցների միջև գործընկերային հարաբերությունների ստեղծմանը, տեղեկատվական և քարոզչական միջոցառումների իրականացմանը:

Օրենսդրության բարեփոխման նպատակով.

- իրականացվել է ՀՀ օրենսդրության (մի շարք հիմնական օրենքների) գենդերային փորձաքննություն, ուսումնասիրվել են կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ ապահովող ՀՀ միջազգային փաստաթղթերը և համապատասխան փոփոխություններ են կատարվել մի շարք օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում:

- մշակվել և 2013 թվականի մայիսի 20-ին ՀՀ ԱԺ-ի կողմից ընդունվել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը:

Ինստիտուցիոնալ կառույցների ստեղծման աշխատանքներն ուղղված են եղել մարզային և համայնքային մակարդակներում գենդերային քաղաքականության ներդրման պատասխանատու մարմինների ստեղծմանը, դրանց աշխատանքների կանոնակարգմանը և մեթոդական օժանդակության տրամադրմանը:

Այս կապակցությամբ .

- ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում ստեղծված ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինների կանոնադրական խնդիրներում ամրագվել են մարզում գենդերային քաղաքականության պետական նպատակային ծրագրերի մշակման, իրականացման և համակարգման աշխատանքների ապահովումը,
- ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում ստեղծվել են գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովներ, որոնց գործունեությունը նպաստում է գենդերային պետական քաղաքականության իրականացմանը մարզային մակարդակում,
- վերահիշյալ կառույցների գենդերային զգայունության բարձրացման նպատակով պարբերաբար իրականացվել են ուսուցողական դասընթացներ,
- քաղաքացիական ծառայողների պարտադիր վերապատրաստման ծրագրերում ներդրվել և յուրաքանչյուր տարի իրականացվում են <Մարդու իրավունքներ> և «Գենդերային հիմնահարցեր» դասընթացները,
- Շարունակաբար իրականացվել են ոլորտի հիմնախնդիրների լուսաբանման և իրազեկման աշխատանքներ,
- մշակվել և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի ախարարի հրամանով հաստատվել են գենդերային զգայուն և տարաբաժանված ցուցիչներ, որոնք կարևոր նշանակություն ունեն պետության կողմից իրականացվող ծրագրերի գենդերային իրավիճակի գնահատման համար:

Առաջիկայում ոլորտի աշխատանքներն ուղղված են լինելու.

- «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի կիրակման մեխանիզմների մշակմանը,
- գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության ծրագրերի մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման մեխանիզմների մշակմանը,
- ընտանեկան բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների բարելավման և գենդերային բռնության ենթարկված անձանց պաշտպանությանն ու նրանց տրամադրվող ծառայությունների առավել արդյունավետ կազմակերպմանն ուղղված միջոցառումների իրականացմանը:

Թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված կազմակերպված աշխատանքները մեկնարկել են դեռևս 2002 թվականին և նախարարությունն իր ներդրումն է ունեցել այդ աշխատանքներում. իրականացվել են բազմաթիվ միջոցառումներ, ուղղված ինչպես երևույթի կանխարգելմանը (թե՛ մասնագիտական պատրաստման և վերապատրաստման, թե՛ բնակչության լուսաբանման առումով), այնպես էլ զոհերին աջակցության ապահովմանը:

2009-2011 թթ. նախարարությունը և ԵԱՀԿ Երևանի գրասենյակը համատեղ իրականացրեցին “Թրաֆիքինգի դեմ պայքարի աջակցության և ռեսուրս կենտրոն” ծրագիր, որի հիմնական նպատակն էր աջակցել մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարում դերակատարում ունեցող համապատասխան կառույցներին, մասնավորապես սոցիալական ոլորտի՝ զոհերի պաշտպանության արդյունավետ մեխանիզմ ստեղծելու, զոհերի կարիքներին ու իրավունքների պաշտպանությանն ուղղված ռազմավարություն մշակելու գործում: Ծրագրի ավարտից հետո նախարարությունը ստանձնեց ծրագրի գործառույթները, ապահովելով այդ բնագավառի սոցիալական քաղաքականության իրականացումն ու առաջընթացը: Թրաֆիքինգի զոհերը ներառվել են օրենսդրության մեջ որպես ռիսկային և աջակցության կարիք ունեցող խումբ, հստակեցվեցին նրանց աջակցության կազմակերպման ընթակարգերը, ամրապնդվեց կապը մարզերի հետ, ապահովվեց քաղաքացիական ծառայողների վերապատրաստման շարունակականությունը, ինչ նպատակով մշակվեց և ներդրվեց թրաֆիքինգի թեմայով ուսումնական մոդուլ:

2010 թվականից ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորվում է “Թրաֆիքինգի զոհերի սոցիալ-հոգեբանական վերականգնում” նախարարության և ԱՄՔՈՐ հասարակակակն կազմակերպության համատեղ ծրագիրը (2014 թ. ավելացել են պետբյուջեի հատկացումները ծրագրի իրականացման համար), որի շրջանակներում զոհերը ստանում են ոչ միայն բժշկասոցիալական օգնություն, իրավաբանական և հոգեբանական խորհրդատվություն, այլև ժամանակավոր ապաստարան:

2013 թվականին մեկնարկած Մարդկանց շահագործման /թրաֆիքինգի/ դեմ պայքարի կազմակերպման 4-րդ ազգային ծրագրը շրջանակներում շարունակվեցին զոհերի աջակցության, թրաֆիքինգի մասին իրազեկման, տեղեկատվության տարածման և այլ աշխատանքները: Նշեմ ընդամենը երկուսը՝

- հանրապետության 4 մարզերում՝ Արարատի, Արմավիրի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի Զբաղվածության մարզային/ տարածքային կենտրոններում “Մարդը կարիքի մեջ” Չեխիայի միջազգային հասարակական կազմակերպության օժանդակությամբ բացվել են “Միգրացիոն ռեսուրս կենտրոններ”, որոնք արտագնա աշխատանքի մեկնողներին խորհրդատվություն են տալիս;
- ի կատարումն ստանձնած միջազգային պարտավորությունների մշակվել է «Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) զոհերին միանվագ դրամական փոխհատուցման նշանակման և տրամադրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ:

Կարծում եմ, նաև այս աշխատանքների շնորհիվ է, որ 2013 թ. ԱՄՆ պետքարտուղարության մարդկանց թրաֆիքինգի մասին ամենամյա զեկույցի համաձայն Հայաստանը մարդկանց թրաֆիքինգի դեմ առավել հաջող պայքար ծավալող երկրների դասակարգման սանդղակի 2-րդ խմբից տեղափոխվեց 1-ին խումբ:

Բարեգործական ծրագրեր

2012-2013 թվականների ընթացքում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովից ստացվել են սոցիալական պաշտպանության ոլորտին առնչվող շուրջ 320 ծրագրեր, որոնք ուսումնասիրվել են և տրվել են ծրագրերը բարեգործական որակելու վերաբերյալ եզրակացություններ:

Նշված 320 ծրագրերից շուրջ 80-ը ուղղված է նախարարության համակարգի կազմակերպությունների՝ մանկատների, տուն-ինտերնատների, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններին՝ հագուստով, սննդով, անհրաժեշտ գույքով: Իրականացվել են նաև վերանորոգման ծրագրեր:

Նախարարությունը բարեգործական կազմակերպությունների աջակցությամբ իրականացրել է «Երբ գալիս է սեպտեմբերը» ծրագիրը: Այս ծրագրի շրջանակներում 4, 5 և ավելի դպրոցահասակ երեխաներ ունեցող բազմազավակ ընտանիքներին ՀՀ մարզերում և Երևան քաղաքում տրամադրվում է գրենական պիտույքներ, դպրոցական պարագաներ, հագուստ, սնունդ:

Յուրաքանչյուր տարի նախարարությունը բարեգործական կազմակերպությունների հետ համագործակցությամբ համապատասխան աջակցություն է ցուցաբերում օգնության խնդրանքով նախարարություն դիմած շուրջ 1200 անապահով ընտանիքներին՝ հատկացնելով սնունդ, հագուստ, կոշիկ, գրենական պիտույքներ, հիգիենիկ պարագաներ: